Այն մանկտեկացն որ կորուսան.
Լաւ հարկեւոր տանուտիրայք,
380 Համեստ ւ՝ աղուոր տանտիկընայք,
Բարձրահասակ ւ՝ աղէկ տեսակ
Գուն ու կերպով ճոխ կըտրճակ,
Այս ամենայն ի սուր անցան,
Գերեզմանի չարժանացան,
385 Կանայք տղայաւքըն գերեցան,
Քան գՀինգ հարիւրն այլ աւելան.
Զի ի միոյ գեղջէ չէին,
Այլ ի բազում տեղաց էին,
Ի Հիզանայ ւ՝ ի Բաղիշոյ,
390 Ոլք հասկաքաղ եկեալ էին.
Ծըղաք ւ՝ Աղաղ ամենէին,
Շատք յՍղիթայ անդէն էին,

---

389. «Հիզան» որ և Խիզան:

391. Այս գիւղերը մինչև այժմ կեցած են Վանայ Ծովի ափին՝ Դատվանի և Խլաթի մէջև: Համեմատ. Մարգիսեանի Տեղագր. ի փոքր և ի Մեծ Հայս, էջ 275 և Մխիթարեանի Նկարագր. Ուղևոր. Ա. էջ 85—86:

392. «յՍղիթայ»—այսպէս իմ օրինակում. բայց Սղիթ կամ Սղիտ գիւղ ես չը կարողացայ գտնել Խլաթի շրջակայքում: Արդեօք Ս'ի և Ա'ի շփոթութիւն չէ՞ այստեղ և յԱղիթայ (կամ յԱղիտայ) կարդալու չէ՞, որպէսի (Աղիտ) գիւղ արդարև գոյութիւն ունի Խլաթի